Հայ գրականություն, Արձակ, Էսսե

13+

Մկրտիչ Արմեն

ՊԱՏՄՎԱԾՔ–ԵՐԳ ՏՐԱՄՎԱՅԻ ՄԱՍԻՆ

1

Քաղաքը մեծ է ու փողոցները ձգված են բազմաթիվ ուղղություններով: Տեղ-տեղ հրապարակներն են և ամենուր պողոտաներն ու փողոցները: Մեծ ու փոքր փողոցներ, մեծ ու փոքր շենքեր և լայն ու նեղ փողոցներ: Նաև երկար են պողոտաները, նաև լայնարձակ են հրապարակները.. .

Եվ այդ բոլորին իրար հետ կապել է երկաթընթաց տրամվայը:

Նա փոխել է հեռվի ու մոտի հասկացողությունը և հեռուն մոտ է թվում և մոտը հեռու: Մոտ է ծայրամասում գտնվող տնակը, որովհետև նրա կողքով, յուրաքանչյուր հինգ րոպեն մեկ, տրամվայն է անցնում: Իսկ մոտակայքում գտնվող փողոցներից մեկը հեռու է, որովհետև նրա միջով երկաթե գծեր չեն անցնում և տրամվայ չի անցնում:

Նա փոխել է հեռվի ու մոտի հասկացողությունը, նաև մենակության ու խմբվածության հասկացողությունը: Հեռու բլուրի վրա մենավոր տնակը մենակ չէ, որովհետև նրա բնակիչները մի քանի րոպեում կարող են հասնել քաղաքի ցանկացած մասը: Եվ նրանց թվում է, թե իրենք ապրում են քաղաքի ցանկացած մասում և ոչ թե հեռավոր բլուրի վրա:

Անցնելով իրենց երկաթե ճանապարհներով, տրամվայի վագոններն իրար են կապել ծայրամասերն ու կենտրոնները: Նրանք փոխել են հեռվի ու մոտի հասկացողությունը և նրանք փոխել են մենակության ու խմբվածության հասկացողությունը…

Այդ նա է՝ տրամվայը…

2

Փոքրիկ քաղաքում, որտեղ տրամվայ չկա, քաղաքն ունի կենտրոնական մաս՝ լավ փողոցներով, ու ծայրամասեր ունի վատ փողոցներով: Դրանց միջև տարբերությունը շատ է: Մի տեղում լույս է և մութ է մյուս տեղում: Մի տեղում լայն է և նեղ է մյուս տեղում: Շենքերի տարբերություն կա, բնակիչների տարբերություն կա և դեռ շատ:

Տրամվայն այդ բոլորը ջնջել է: Փոքր է տարբերությունը կենտրոնի և ծայրամասերի միջև և այդ տարբերությունը քիչ է: Լայն փողոցները ձգվում են մինչև քաղաքի ծայրերը, լույսերը քիչ են նվազում այդ ծայրերում, շենքերի տարբերությունը քիչ է, նաև բնակիչներինը:

Տրամվայը ջնջել է կենտրոնի ու ծայրամասի հասկացողությունը և ջնջել է դրանց սահմանները: Խաչաձևելով այդ ջնջված սահմանները, անցնում են տրամվայի վագոնները դեպի այն կողմ: Դրանց երկաթե ճանապարհներն անցնում են ծայրամասերով ու կենտրոններով, կենտրոններով ու ծայրամասերով…

Մոտ է այս հրապարակը, մոտ է այն հրապարակը, մոտ են փողոցները, և՛ կինոները, և՛ թատրոնները, և՛ հիմնարկները…

Այդ նա է՝ տրամվայը…

3

Բազմաթիվ փողոցներով ավտոներն են անցնում և ավտոբուսները, կառքերն են անցնում և բեռնատարները: Անցնում են մարդիկ: Եվ նորից մարդիկ են անցնում, ավտոներն ու ավտոբուսները, կառքերն ու բեռնատարները: Նրանցից մեկն աջ է թեքվում, մյուսը՝ ձախ, մի ուրիշն ուղղաձիգ է սլանում, և գալիս է չորրորդը: Ավտոն աջ թեքվեց, բայց նա կարող էր նաև ձախ թեքվել: Կառքն ուղղաձիգ անցավ, բայց դեպի աջ կգնար՝ եթե ուզենար: Եվ միայն տրամվայն է, որ անցնում է իր սահմանված ճանապարհներով և ուրիշ կողմ չի թեքվում երբեք: Նրա վագոններն իրենց ընթացքն ունեն և գնում են այդ ընթացքով:

Սիրելի են այն օրենքները, երկաթե այն ռելսերը, որոնցով սահմանված է վագոնների ընթացքը: Մարդը նստել է տրամվայ և հաճույքով է ենթարկվում իր ձեռքով կառուցած տրամվայի ընթացքին և այն օրենքին, որ ինքն է սահմանել իր համար: Եվ նա ժպտում է, որ հլու երկաթն ու զսպված էլեկտրոն հնազանդ են սահմանված օրենքին և մի վագոնն աջ է գնում, մյուսը՝ ձախ, այն մյուսն ուղղաձիգ, չորրորդն այս կողմ է գալիս և նորից նույնը:

Գնում է վագոնը, սլանում է, դանդաղ է գնում մի քիչ, ապա նորից: Եվ այն անկյունում նա կանգնում է: Նորից է գնում և կանգնում է այնտեղ, իսկ այնտեղից նա թեքվում է այն կողմ, անպայման այն կողմ և ոչ թե այս…

Երկաթե սյուներն իրենց թևերով պահել են էլեկտրալարերը: Վագոնի աղեղը քսվում է լարին, և վագոնը գնում է: Լսվում է անիվների խռպոցն ու շվոցը ռելսերի վրա և ապա զնգոց՝ վագոնի ներսից: Վատմանը կանգնեցնում է այն:

Այդ նա է՝ տրամվայը:

4

Երեկո:

Եվ այն, որ փողոցներ են, և այն, որ շատ լույս են ու քիչ լույս, և այն, որ շատ գեղեցիկ են ու քիչ գեղեցիկ, այդ բոլորն այժմ պանորամա է տրամվայի լուսամուտից: Ե՛վ կամուրջը, և՛ լուսազարդ ցուցափեղկերը, և՛ այն փողոցը, որ անցավ:

Մթության մեջ լույսեր են պլպլում և դրանք հեռու փողոցներ են:

Վագոնի աղեղն էլեկտրալարին է քսվում, և վագոնը գնում է: Տեղ-տեղ թույլ ճայթում է, և կապույտ կայծն է առկայծում աղեղի և լարի միջև, իսկ վագոնի մեջ մարդիկ են և էլեկտրական լույսն է:

Խռպում է ու շվացնում, կապույտ առկայծում է և թույլ ճայթում, լույսեր ու շողեր են, շատ ու քիչ լույս փողոցներ են և երկաթի վրայով ճանապարհն է:

Այդ նա է՝ տրամվայը:

5

Վատմանը հանեց ձեռնոցները: Ամեն կողմից եկել են վագոնները և հավաքվել են տրամվայի պարկում:

Վաղը, վաղ առավոտյան, նրանք նորից դուրս կգան և վաղ առավոտից մինչև ուշ գիշեր փողոցներով կանցնի, կգա, կգնա, կշարժվի ու քաղաքը շարժման մեջ կդնի նա՝ տրամվայը. . .

1929